



ՀԱՅԿ. ՍՍՌ ԱՌԴՐՁԱԿԱՌՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Գ. ՄԻԱՍՅԱՆ

ԲՈՒԺԱԿԱՆ  
ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ  
ՀՐԱՄԱՆԵՐԸ



615 82

15824

5-72

Գիւղուն, Գ. Ա.

Բարեկամական պատճեն

Համար 1n.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒԲ ԱՐԵՎԱԴԱԳՈՎՈՐԻՔԱՆ ՄԻՆՆԵՐՈՒԹՅՈՒՆ

Գ. Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

615.83

15-79

ՏԵՂՄԱՆ Հ 1951 թ.

ՅՈՒԺԱՎԱՆ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ  
ՀԻՄՈՒՆ ՔՆԵՐԸ

45.824

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1949



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

A-  
16595

Г. А. МИНАСЯН

Основы лечебной физкультуры

(На армянском языке)

Армгиз, Ереван, 1949

## ԲՈՒԺԱԿԱՆ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ֆիզիկական վարժությունները բուժման նստատակով օգտագործելու սկզբունքները վաղուց հայտնի են մարդկությանը։ Տարբեր ժողովուրդներ տարբեր ժամանակաշրջանում այս կամ այն շափով աշխատել են որոշ հիվանդությունների պրակտիկ բժշկության մեջ կիրառել շարժումներով բուժելու սկզբունքը։ Սակայն, պատմական ոչ մի ժամանակաշրջանում և աշխարհում ոչ մի տեղ բուժական ֆիզկուլտուրան այնպիսի զարգացման շի հասել, ինչպես այժմ մեղ մոտ—Սովետական Միության մեջ։

Մեր երկրում կառավարությունը լիովին իր վրա է վերցրել աշխատավորության համար բարեկեցիկ կյանք ստեղծելու և նրա առողջությունը պահպանելու խնդիրը։

Ազգարնակշության ֆիզիկական դաստիարակության և առողջապահության հարցերը մեղ մոտ պետական կարեռադույն նշանակություն ունեցող խնդիրներ են։ Ահա թե ինչու մեր առողջապահության օրգանների աշքից չեր կարող վրիպել ժողովրդի առողջության վիճակի բարձրացման և պահպանման նպատակով ֆիզիկական վարժությունների լայն օգտագործման սկզբունքը։

Բուժական ֆիզկուլտուրան ֆիզիկական դաստիարակության սովետական սիստեմի անբաժանելի մասն է կազմում։ Ֆիզիկական դաստիարակության սովետական սիստեմը ձրստում է հետևյալ նպատակներին։

1. Ֆիզիկական վարժությունների և սպորտի միջոցով տալ ազգարնակշությանը բազմակողմանի ֆիզիկական դաստիարակություն։

2. Ռասուցման և մարդման համար կիրառվող վարժու-

թյունները պետք է ունենան գործնական նշանակություն, այսինքն՝ այդ վարժությունները պետք է օգտագործելի լինեն աշխատանքի, կենցաղի և մարտական պայմաններում:

3. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բոլոր միջոցները պետք է ունենան առողջապահական բնույթ:

Ֆիզիկական դաստիարակության սովետական սիստեմի այդ սկզբունքներն իրենց կոնկրետ արտահայտությունը գտնեն «Պատրաստ աշխատանքի և երկրի պաշտպանության» (ՊԱՊ) կրծքանշանի կոմպլեքսում: Այդպիսով, ՊԱՊ-ի կոմպլեքսը ֆիզիկական դաստիարակության հիմքն է կազմում:

Ֆիզիկուլտուրան և սպորտը մեր երկրում վաղուց արդեն հզոր մասսայական շարժման է վերածվել: Միլիոնավոր մարդիկ սիստեմատիկ կերպով պարապում են ֆիզիկուլտուրայով, հանձնում են ՊԱՊ-ի կրծքանշանի նորմաները, կատարելագործում են իրենց վարպետությունը սպորտի տարբեր ձևերում:

Ազգարնակշության որոշ մասը, ելնելով իր առողջության վիճակից, հնարավորություն շունի ֆիզիկուլտուրայով և սպորտով սլարապելու: Այդպիսիների նկատմամբ որոշ դեպքերում ֆիզիկական վարժությունները կարելի է օգտագործել բուժման նպատակով, պարապողի առողջությունը վերականգնելու համար, որից հետո այդ անձինք հնարավորություն են ունենում մասնակցելու ֆիզիկական դաստիարակության խմբակներում, շատ դեպքերում նույնիսկ սպորտի տարբեր սեկցիաներում:

Դժվար է ֆիզիկական վարժությունների մեջ խիստ սահման դնել, որոշելու, թե ո՞րն է նրանցից բուժման համար, որը մարդման և ո՞րը պրոֆիլակտիկայի (այս կամ այն հիվանդության կանխման) համար: Բոլոր դեպքերում էլ ֆիզիկական վարժությունների ներգործությունը օրգանիզմի վրա գրեթե միևնույնն է: Տարբերությունը այդ վարժությունները կատարելու չափավորման մեջ է: Վարժությունների կամ նրանց որոշակի կոմպլեքսի բավականաշափ ճշգրիտ չափա-

վորումն է, որ մեզ իրավունք է տալիս նույն շարժումները  
օգտագործել թե՛ բուժման և թե՛ մարդման նպատակով:

Ի՞նչ է ուրեմն բուժական ֆիզկուլտուրան:

Բուժական ֆիզկուլտուրան, դա ֆիզկուլտուրայի միջո-  
ցառումների մի կոմպլեքս է, որ օգտագործվում է համա-  
պատասխան շափակորվածության սահմաններում, հիվանդ  
մարդու նկատմամբ՝ բուժման նպատակով, նրա առողջությու-  
նը և աշխատունակությունը արագ և լրիվ վերականգնելու  
համար:

Բուժման այդ մեթոդի հիմնական գործոնը ֆիզիկական  
վարժությունն է: Ֆիզիկական վարժությունների պակասը  
լրացնում են բնական ֆակտորների օգտագործմամբ, ինչպես  
արևը, օդը, ջուրը և աշխատանքի ու կենցաղի ռացիոնալ  
ռեժիմի կիրառումը:

## Ա. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻԶԻՈԳԻԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆԻՉՄԻ ՎՐԱ

Մեծ է ֆիզիկական վարժությունների դերը մարդու անձի  
կաղմակերպման գործում: Ֆիզիկական վարժություններով  
սիստեմատիկ պարապելու միջոցով զգալիորեն հեշտանում  
են աշխատանքի և կենցաղի պայմաններում պահանջվող  
շարժումները: Մարզված մարդն ավելի քիչ ներվա-միկանային  
էներգիա ծախսելով, ավելի մեծ աշխատանք է կատարում:  
Մարզումների շնորհիվ շարժումները դառնում են սահուն ու  
համաշափու զարգանում է մարդու մկանային զգացողությու-  
նը, աշքաշափիր, կատարելագործվում է շարժումների համա-  
գործակցությունը: Պարապողը ձեռք է բերում ճարպելություն,  
ուժ, արագաշարժություն: Սիստեմատիկ պարապելով մար-  
դը կոփվում է, տոկունություն է ձեռք բերում:

Մարմնամարզությունը, սպորտը և խաղերը զարգայնում  
են ոչ միայն մարդու ֆիզիկական հատկությունները, այլև  
մեծ ազդեցություն ունեն հոգեկան հատկությունների զար-  
գացման դորժում: Ֆիզիկական վարժություններով կամ

սպորագվ պարապողների մոտ զարգանում է հիշողությունը, ուշադրությունը. մարդը ձեռք է բերում արադ մտածելու ունակություն, դառնում է ավելի նախաձեռնող, համառ, ինքնավստահ, քաջ և համարձակ:

Ընդհակառակը, ստիւլովական հանգիստը, այսինքն՝ հանգիստ այն պայմաններում, երբ մեր օրդանիղմին կամ նրա մի հատվածին ստիւլված ենք երկարատես հանգիստալ, հանել աշխատանքից (անկողնի ռեժիմը, ծայրանդամների վրա զանազան փաթաթան դնելը, ցավի կամ այլ պատճառով որևէ հատվածի անշարժ պահելը), այդ ամենը բացասաբար է ազդում մարդու թե՛ ֆիղիկական և թե՛ հոգեկան հատկությունների վրա: Այդպիսի դեպքում մարդը բնկճվում է, շրջապատի նկատմամբ դառնում է անտարբեր, կորցնում է ձեռներեցությունը: Դրա հետ տուժում են նաև ֆիղիկական հատկությունները, փոքրանում է մկանների ծավալը, պակասում է նրանց առաձգականությունը, ուժը, և դանդաղ, անհամաշատի են ընթանում օրդանիղմի ֆիղիոլոգիական պրոցեսները:

Օրդանիղմում կամ նրա առանձին հատվածներում, երկարատես հանգստի հետեանքով, շատ անդամ առաջ են դալիս այնպիսի փոփոխություններ, որոնք երբեմն վտանգավոր բնույթ են կրում:

Ֆիղիկական վարժությունները՝ բուժման նպատակով օդտապործելու համար ամենից առաջ պետք է իմանանք նրանց ֆիղիոլոգիական ազդեցությունը տարբեր հյուսվածքների և օրդանների վրա: Իմանալով ֆիղիկական վարժությունների գործած ազդեցության մեխանիզմը, մենք հնարավորություն ունենք գիտակցորեն հիմնավորելու նրանց օդտապործման անհրաժեշտությունը այս կամ այն հիմանդրությունների բուժման գործում:

Այժմ տեսնենք, թե ստիւլովական հանգստի և մկանային աշխատանքի հետեանքով ինչ փոփոխություններ կարող են առաջ գալ տարբեր հյուսվածքներում ու օրդաններում:

1. Հանգստի և շարժումների ազդեցությունը բջջի վրա.— Երկարատև հանդիսաց խանգարում է բջջի նորմալ կյանքը, ազդում է ներհյուսվածքային փոխանակության վրա, առաջացնում է բջջի սնուցման խանգարումներ, որի հետևանքով բջջիջը հետ է աճում՝ նրա ծավալն ու շափերը սկսում են փոքրանալ: Եթե բջջի թերասնումը երկար է տևում, ապա առաջ են դալիս անբուժելի փոփոխություններ:

Ակտիվ ֆիզիկական վարժությունների ժամանակ բջիջը և հյուսվածքները, արյան շրջանառության աշխատացման միջոցով, ստանում են մեծ քանակությամբ սննդանյութեր, որոնք ակտիվացնում են վերջինիս կենսական պրոցեսները, ապահովում նրա նորմալ կյանքը:

Ակադեմիկոս Ն. Ն. Պետրովը քաղցկեղ (ռաբ) հիվանդության ամենահավանական պատճառներից մեկը համարում է ներբջիջային փոխանակության խանգարումը: Քաղցկեղ հիվանդությունը կանխելու իրրե միջոց նա առաջարկում է ամենից առաջ սիստեմատիկ կերպով պարագանել ֆիզիկական վարժություններով, որի շնորհիվ կարելի է ակտիվացնել ու կարգավորել ներբջիջային փոխանակությունը, կանոնավորել բջջի կենսական պրոցեսները:

2. Հանգստի և շարժումների ազդեցությունը մկանային հյուսվածքի վրա.— Ֆիզիկական վարժությունները ներդրում են օրգանիզմի վրա մկանային հյուսվածքի միջոցով, իսկ վերջինները օրդանիզմում կազմում են մարմնի քաշի 40 տոկոսը՝ տղամարդկանց մոտ և 32 տոկոսը՝ կանանց մոտ:

Ֆիզիկական աշխատանքը և ֆիզիկական վարժությունները զարգացնում են մկանների ծավալը, ուժը, նրա կըծելովելու ունակությունը: Տարբեր մկանային խմբերի համադրծակցված աշխատանքը, ամենաբարդ մկանային գործողությունները, շատ անգամ կրկնվող վարժությունների շնորհիվ, դառնում են հեշտ ու կատարվում են ներվային ու մկանային նվազագույն էներգիայի ծախսումով:

**Մկանները** անգործությունից հետ են աճում, փոքրանում է նրանց ծավալը, պակասում է նրանց ուժը, թուզանում է առածգականությունը։ Եթե մկանները մատնված են լինում երկարատև անդուրծության, ապա նրանք ենթարկվում են կազմափոխման։ Մկանների մեջ սկսում են ներածել ճարպացին կամ շարակցական հյուավածքներ, որոնք մկաններին զրկում են կծկվելու իր հիմնական հատկությունից և անդառնալի կերպով խանգարում նրանց ֆունկցիաները։

Կատարված են այսպիսի փորձեր։ Կտրել են մկանախըրձին մոտեցող ջլերը կամ ներվերը, որի հետևանքով տվյալ մկանային հատվածը ենթարկվել է ստիպողական հանգստի, այսինքն՝ զրկվել է ակտիվ կծկումներից, և շատ արագ, մոտերկու շաբաթում, մկանը սկսել է հետ աճել։

Ֆիզիկական վարժություններ կատարելիս, մկանները ակտիվ կերպով կծկվում են, որի հետևանքով լավանում է ներհյուսվածքային փոխանակությունը, ակտիվանում է տվյալ հատվածի արյան շրջանառությունը, հյուավածքը աշխատանք կատարելիս ստանում է ավելի շատ արյուն, հետևապես ավելի շատ սննդանքութեր և թթվածին, որը անհրաժեշտ է մկանային կծկումների ժամանակ։ Աշխատող հատվածից արագ կերպով հեռանում են այն նյութերը, որոնք գոյացել են աշխատանքի ընթացքում՝ ածխաթթու գաղը և նյութերի փոխանակության այլ արդասիքներ։

Լավանալով մկանի սնումը, լավանում է նրա ֆիզիոլոգիական ֆունկցիան, բարձրանում է նրա աշխատունակությունը, զգալիորեն հեղտանում է վերստին նույնանման աշխատանք կատարելը։

**Մենք** ասացինք, որ աշխատող մկաններում փոխանակության ֆունկցիաները լավանում են. այժմ տեսնենք, թե ինչ առացուցներ կան դրա համար։

Մեր մկաններում կան բազմաթիվ արյունատար անոթներ և մազանոթներ։ Նկատված է, որ մկանային կտրվածքի 1 քառ. միլիմետր մակերեսում մկանի հանգստի ժամանակ

Խոշորացուցի միջոցով կարելի է հաշվել ընդամենը 8—30 լսացված մաղանոթներ։ Բավական է, որ այդ մեկաններին աշխատանք տանք, արդեն երևացող, այսինքն աշխատանքի մեջ ընդգրկված մաղանոթների թիվը կրազմապատկվի, հարցուր անդամ։ Նույն մակերեսի վրա բացված մաղանոթներ կարելի կլինի հաշվել մինչև 3 հազար հատ։

Այս դեռ բավական չէ։ Ապացուցված է, որ չուրաքանչյուր բացված մաղանոթի լուսանցքը շատ ավելի մեծ է, քան հանդսաի ժամանակ երևացող մաղանոթների լուսանցքները։ Այնպես որ բացված մաղանոթների լուսանցքների ընդհանուր մակերեսը աշխատանքի ընթացքում ավելանում է ավելի քան 250 անգամ, հանդսաի վիճակի մաղանոթների լուսանցքների ընդհանուր մակերեսի համեմատությամբ։ Իրա հետ միաժամանակ լավանում են մկանի փոխունակության ֆունկցիաները, դեպի մեկանը հոսում է շատ արյուն հարուստ թթվածնով և մեկանի աշխատանքի համար անհրաժեշտ սննդանյութերով։

Ի՞նչն է այդ բոլորի պատճառը։ Ո՞րտեղ էին մինչև աշխատանքը թաքնված մաղանոթները։ Նրանք նո՞ր գոյացան, թի կային։

Անշուշտ այդ մաղանոթները մեկաններում կային, նրանք չեն երևում, որովհետև նրանց լուսանցքը սեղմված էր։ Անհրաժեշտ ծանրաբեռնվածությունից զուրկ այդ մեկանների մեջ դանդուղ բոլոր մաղանոթները չեն գործում։ Մեծացնելով մկանի աշխատանքը, գործի են դրվում մինչև այդ հանդըստի մեջ եղած բազմաթիվ մաղանոթներ, որի հետեւանքով ապահովվում է հյուսվածքի փոխանակության բարձր պահանջը աշխատանքի պայմաններում։ Որքան մեծ է հյուսվածքի աշխատանքը, այնքան շատ է գործող մաղանոթների թիվը։

Աշխատանքը դադարեցնելուց հետո, որոշ ժամանակ անց, բացված մաղանոթները նորից սեղմվում են, մնում են այնքան գործող մաղանոթներ, որքան անհրաժեշտ է հանդըս-

տի ժամանակ հյուավածքի սնուցումը ապահովելու համար:

Արդյոք շատ է այդ մազանոթների թիվը օրգանիզմում: Պատասխանը դրական է: Այո, նրանք շատ-շատ են, եթե մենք հնարավորություն ունենայինք բոլոր մազանոթները հանել և որպես թելիկներ իրար միացնել, կստացվեր 100.000 կլմ. երկարություն, իսկ եթե այդ մազանոթները իրար կողքի շարեինք, կրոնեին 6.000 քառ. մետր տարածություն:

Ահա թե որքան շատ են մեր օրգանիզմում մազանոթների թիվը: Հետևաբար, մենք ֆիզիկական վարժություններ կամ աշխատանք կատարելիս երբեք չենք կարող մոռացության տակ դրանց ակտիվ դերը:

Այս հանգամանքը շափազանց մեծ նշանակություն ունի վարժությունները բուժման նպատակով օգտագործելու համար:

Մկանների ակտիվ և ոիթմիկ կծկումները մեծ շափով օդնում են արյան շրջանառությանը, հատկապես նրա կենտրոնական ապարատի՝ սրտի աշխատանքին: Մկանային կծկումները մեխանիկորեն ճնշում են նրանց մեջ գտնվող մազանոթների ու երակների վրա, այնտեղից արյունը մըղվում է դեպի մեծ երակները, և որովհետև երակների փականները բացվում են դեպի սիրտը, հետևաբար մկանների հաշորդական կծկումների շնորհիվ հեշտանում է արյան հոսումը ծայրանդամներից դեպի սիրտը: Երբ արյան ներհոսը դեպի սիրտը լավ է կատարվում, ապա սրտի կծկումները դառնում են ավելի էֆեկտիվ, որի շնորհիվ սիրտը ի վիճակի է լինում դուրս մղել ավելի մեծ քանակությամբ արյուն: Ուրեմն մկանային դինամիկ աշխատանքը (ոիթմիկ կծկումները) նպաստում են արյան շրջանառությանը, իսկ նրանց ստատիկ կծկումները (երբ մկանը երկար ժամանակ կծկված է մնում, պահելով ծայրանդամը միևնույն դիրքում, առանց շարժական էֆեկտի), արյան շրջանառությանը չեն կարող նպաստել: Մկանը մի անգամ կծկվելով, արյունը տվյալ հատվածից մղվում է, բայց որովհետև կծկման ֆազային

իսկույն շի հաջորդում թուլացում, զարկերակային ներհոսը այդ հատվածում դժվարանում է։ Առաջացած հոգնածության թույները շուտ շեն հեռանում և սաստիկ լարվածության մեջ գտնվող մկանները, փոխանակության պայմանների աննպաստ լինելու հետևանքով, իսկույն հոգնում են։

Փորձենք մեր ձեռքը բարձրացնել կամ երկարել և այդպես պահել մի քանի րոպե։ այդ աշխատանքը մեղ կթվա վերին աստիճանի ծանր և հոգնեցուցիլ։ Մինչդեռ նույն մկանները, դինամիկ աշխատանքի պայմաններում, կարող են ժամերով աշխատել, առանց նկատելի շափով հոգնելու։

Սրանից հետևում է, որ վարժությունները բուժման համար օգտագործելու դեպքում մենք պետք է խուսափենք մկանների ստատիկ լարվածությունից, մանավանդ, երբ գործունենք սրտանոթային սիստեմի հիվանդների հետ։ Մինչդեռ շատ է պատահում, որ սրտի հիվանդություն ունեցող մարդիկ, վախենալով քայլել, երկար ժամանակ մնում են կանգնած։ Այդ կարգի հիվանդների համար ավելի նպատակարումար է դանդաղ քայլելը, քան թե երկար ժամանակ կանգնելը։

Մի շարք հիվանդությունների դեպքում ահա այս ֆիզիոլոգիական կարևոր երևոյթները մեզ հնարավորություն են տալիս գիտականորեն հիմնավորելու ֆիզիկական վարժությունների օգտակար դերը։

3. Հանգստի և շարժումների ազդեցությունը ոսկրային հյուսվածքի վրա.— Կմախքի ոսկրերը, մասնավորապես երկար, խողովակավոր ոսկրերը (ազդրի, սրումքի, բազկի, նախաբազկի) կոշված են իրենց վրա կրելու մշտական ծանրություններ։ Մկանային կծկումների ժամանակ այդ ոսկրերը իրենց երկայնաձիգ առանցքի շուրջը ունենում են բավականաշատ մեծ ծանրագեռնվածություն։ Շարժումների ժամանակ ամենից առաջ հոդերի մակերեսները սեղմվում են միմյանց և ապա՝ առաջացնում են շարժական էֆեկտ։

Մկանային կծկումների բացակայության ժամանակ ոսկըն էլ զրկվում է իր ծանրաբեռնվածությունից:

Ստորին վերջույթների խողովակավոր ոսկրերը (ազդրեր և սրոմքներ) մարմնին ուղղահայաց դիրքում պահելու և տեղաշարժեր կատարելու համար, մշտապես կրում են մեծ ծանրություն: Երկայնաձիգ խողովակավոր ոսկրերի բնական ֆունկցիան այն է, որ նրանք իրենց երկայնաձիգ առանցքի շուրջն ունեն որոշակի ծանրաբեռնվածություն, հետևապես այդ ոսկրերի բնական զարգացման և ամրացման համար անհրաժեշտ պայման է հանդիսանում ծանրություններ կրելու նրանց ֆունկցիան:

Նկատված է նաև, որ ֆիզիկական աշխատանքով կամ սպորտով պարապողների մոտ ոսկրաթմբերը, որոնց վրա ամրանում են մկանախրձերի չլերը, լինում են ավելի լիք, մեծ ու ամուր: Այստեղից եղրակացություն. մկանային աշխատանքը նպաստում է ոսկրերի զարգացմանը և ամրացմանը:

Բավական է, որ երկար ժամանակ դադարեն մկանային կծկումները կամ ոսկրը զրկվի իր վրա ծանրություն կրելուց, ուրիշ խոսքով զրկվի իր ֆիզիոլոգիական ֆունկցիաներից, նման պայմաններում ոչ միայն տեղի չի ունենա ոսկրի հետագա զարգացումն ու ամրացումը, այլ ստիպողական հանգիստը ոսկրի կազմի մեջ առաջ կբերի քայլքայում: Հանգստի մեջ պահած ոսկրը զրկվում է իր աղերից, թուլանում է նրա կոմպակտությունը, դառնում է փխրուն ու հեշտ կոտրվող:

Ոսկրի այս վիճակը կարելի է հայտնաբերել ունտգինան նկարների միջոցով: Բավական է, որ ոսկրին տանք համապատասխան ծանրաբեռնվածություն, այսինքն՝ ստեղծենք նրա համար պայմաններ, իր ֆիզիոլոգիական ֆունկցիան կատարելու համար. այդպիսի դեպքում նորից կվերականգնվի ոսկրի ամրությունը: Այս տվյալները մեզ թելադրում են, ոսկրային կոտրվածքների ժամանակ, ոսկրա-

կոշտի արագ զարգացման համար օգտագործել բուժական ֆիզկուլտուրայի մեթոդները:

Կոտրվածքների բուժման համար վարժությունները կատարում ենք երկու նպատակով.

ա) Ֆիզիկական վարժությունների ընդհանուր ներգործման միջոցով աշխատացնում ենք արյան ընդհանուր շրջանառությունը, որով լավացնում ենք կոտրված հատվածի հյուսվածքների սնումը: Այդ հատվածը ավելի շատ արյուն է ստանում, հետևապես և շատ էլ շինանյութեր, ոչխավորապես աղեր՝ ուսկրագոյացման համար:

բ) Վարժությունները կարող ենք օգտագործել նաև տեղական ներգործման համար: Կոտրվածքից 10—15 օր հետո, կոտրված հատվածը դեռ գիպսի փաթաթանի մեջ, սկսում ենք վերջույթը ծանրաբեռնել նրա երկայնաձիգ առանցքի շուրջը: Կոտրված ոսկրի ծայրերը իրար սեղմելով, ազատում ենք նրանց միջև ընկած ոսկրի միացմանը խանգարող այլ հյուսվածքներից, և որ ամենապլիխավորն է՝ ոսկրի ծայրերը պարբերաբար իրար սեղմելով, կոտրված հատվածում հեշտացնում ենք արյան շրջանառության հետ բերվող կրային աղերի նստվածքը, որն օգնում է ոսկրակոշտի արագ զարգացմանը:

Վնասված հատվածը, մանավանդ եթե դա ստորին վերջույթն է, շի զրկվում իր բնական ֆունկցիայից, և կոտըրվածքը՝ շուրջ է լավանում: Այս ուղղությամբ կատարած մեր դիտողությունները ցույց են տվել, որ սիստեմատիկ բուժական ֆիզկուլտուրայով պարապելու միջոցով և ոսկրը ժամանակին ու շափակոր ծանրաբեռնելով, կոտրվածքները շատ շուրջ են բուժվում և վերջույթը շի զրկվում իր ֆունկցիայից:

Ոսկրային կոտրվածքների ժամանակ, որքան շուրջ է նշանակվում բուժական ֆիզկուլտուրան (իհարկե համապատասխան ցուցումների պայմաններում), այնքան արագ է կատարվում ոսկրակոշտի զարգացումը, վնասվածքը լավա-

նում է անթերի, պահպանելով հատվածի հենման և շարժման ֆունկցիաները:

4. Հանգստի և շարժումների ազդեցությունը նողերի վրա.— Հանրածանոթ փաստ է, որ երկարատև անշարժությունը առաջ է ընթառություն այնպիսի փոփոխություններ, որ հետագա շարժումները տվյալ հոդում դժվարանուան, իսկ շատ դեպքերում անհնարին են դառնում: Հոդերն ամրացնող կապանները անդործությունից սկսում են կորցնել իրենց առաձգականությունը, կարծրանուած են և կարճանուած, հոդապարկերը կնճոռտվուած են, հոդային մակերեսները դառնուած են անհարթ, թվարկված երևույթները ավելի արագ են զարգանուած, երբ հոդում կամ նրա շուրջը կան վնասվածքներ: Ֆիզիկական վարժությունների ժամանակ, հոդերի բոլոր էլեմենտները, ֆունկցիոնալ գրդիւններ և անհրաժեշտ սնումուատանալով, պահպանվուած են բնական վիճակուած: Այն դեպքուած, երբ առկա է հոդերի շարժումակության սահմանափակուած, ուրիշ ոչ մի այլ միջոցով չենք կարող վերականգնել այն, եթե ոչ, միայն ֆիզիկական վարժություններով: Ֆիզիկական վարժությունները այստեղ գրեթե միակ և գլխաւոր միջոցն են, որոնցով հնարավոր է վերականգնել հոդերի նորմալ վիճակը և նրանց աշխատանքը:

Նկատված է, որ նույնիսկ ներհոդային կոտրվածքների դեպքուած, ժամանակին նշանակված բուժական ֆիզկուլտուրան հիմնական դեր ունի հոդի վարժեք բուժման դործուած: Շատ հետաքրքրական է այն հանգամանքը, որ հոդերի անշարժության հետևանքով, վիրահատմամբ հեռացված հոդի հատվածի փոխարեն, ժամանակին նշանակված վարժությունների միջոցով ստեղծվուած են նոր հոդային մակերեսներ, գոյանուած է նոր հոդաշապիկ, որով շարժումներ կատարելը դառնուած է հնարավոր, մինչդեռ այլ եկանակով երբեք այդ բանին հասնել շէր կարելի:

Սիստեմատիկ կերպով ֆիզիկական վարժություններով

պարապելը օգնում է մեզ պայքարելու շարժական ապարատի ծերունական փոփոխությունների դեմ:

Սերուների մրտ մեջքի կուանալը, հողերի շարժումների սահմանափակումը, նրանց մշտական կիսածալ վիճակը առաջ է՝ բերում կապանների կարճացում, նվազում է նրանց ճկունությունը և անհնարին է դառնում նրանց հետագա լիակատար ճպվելը: Այս հանգամանքին, անշրջու, նպաստում է մկանների թուլությունը, որի հետևանքով շատ անգամ մարդիկ ժամանակից շուտ փոխում են իրենց կեցվածքը, մեջքը կորանում է, ուսիրը գալիս են առաջ, գլուխը կախ է ընկնում, կանգնած դեպքում կոնքաղղրային և ծնկային հողերը մնում են կիսածալ:

Պարզ է, որ մշտական մարզանքները հողերին և կապաններին պահում են լիակատար շարժունության մեջ, մկանները մնում են ուժեղ, և կեցվածքի շեղումները նշանակալից շափով կանխվում են:

5. Վարժությունների ազդեցուրյունը սննդառույշան գործարանների վրա.— Սիստեմատիկ ֆիզիկական վարժություններ կատարելիս, հայտնի է, որ օրգանիզմի էներգետիկ ծախսը մեծանում է, հետևապես մեծանում է և սննդառության պահանջը, իսկ սննդառության պահանջի մեծացումը բարձրացնում և ակտիվացնում է աղեստամոքսային տրակտի գործունեությունը:

Ֆիզիկական վարժությունները լավացնում են ախորժակը, և օրգանիզմի կողմից սննդանյութերի յուրացումը կատարվում է ավելի լավ:

Խրոնիկական փորկապությունները որոշ անձանց մոտ մեծ մասամբ արդյունք են աղիքների կծկողական և շարժողական ֆունկցիաների խախտման: Վերջինս առաջ է գալիս երկարատև անկողնի ռեժիմի հետևանքով, կանանց մոտ՝ ծննդաբերությունից հետո: Աղիքների ֆունկցիան կախված է նաև ներվային սիստեմի վիճակից, աշխատանքի և կենցաղի պայմաններից: Այստեղ գլխավորը աղիքների տոնութիւններն է, նաև դեպքերում, սննդանյութերի մեջ՝ գրգոհ նյու-

թերի՝ բջջաթաղանթի բացակայության կամ պակասության հետևանքով, ընկնում է աղիքների կծկողական ֆունկցիան:

Փորկապությունները լինում են նաև աղիքների տոնուախարձրացումից՝ մեծ մասամբ դյուրագրգիռ մարդկանց մոտ ներվային սիստեմի, մասնավորապես վեգետատիվ ներվային սիստեմի դրդովածության հետևանքով:

Խրոնիկական փորկապության երկու դեպքումն էլ ֆիզիկական վարժությունները կարելի է օգտագործել որպես աղիքների տոնուախարձրացնող միջոց:

Բուժական ֆիզկուլտուրայի սիստեմատիկ պարապմունքների միջոցով կարելի է կարդավորել աղեստամոքսային տրակտի դորժունեությունը: Այս դեպքում օգտակար է կատարել ամենօրյա հիգիենիկ մարմնամարդություն, շեշտը դնելով որովայնի մամուլի ամրացման վրա: Որովայնի մամուլի ամենաընդունված վարժություններն են՝ մեջքի վրա պառկած վիճակից ոտքերը վեր բարձրացնել կամ նույն վիճակից նստել ու պառկել, կանգնած դիրքից կտրուկ կոացումներ կատարել դեպի առաջ, ձեռքերի վրա կախված կամ հենված, ոտքերը անկյուն պահել և այլն:

Վարժությունների միջոցով ամրացնելով որովայնի մամուլը, շավանում է աղիքների տոնուախարձրությունը և կանոնավորվում է նրանց կծկողականությունը: Նման դեպքերում վարժություններն ընդհանուր ֆիզիոլոգիական ներդորժություն ունենալուց բացի, դրդում են աղիքների պատերը, կատարում նուրբ մասսաժ, աշխաժացնում նրանց ֆունկցիան:

Իբրև դրդոիչ վարժություններ կարելի է կատարել ուտյուններ, խաղեր, զբոսանքներ: Ֆիզիկական վարժությունները՝ լավ աղդեցություն ունեն կենտրոնական ներվային սիստեմի վրա և բարձրացնում են էմոցիոնալ տոնուախ, ըստեղծում կենսուրախ տրամադրություն: Այս բոլորը, անշուշտ, դրական կերպով է աղդում ստամոքսի հյութազատության վրա, և մարտողական պրոցեսները կատարվում են կանոնավոր:

6. Հանգստի և վարժությունների ազդեցությունը ներվային սիստեմի վրա.— Ներվային սիստեմը մասնակցություն

ունի օրդանիզմի բոլոր գործողություններում։ Յուրաքանչյուր  
ֆիզիարժություն միաժամանակ հանդիսանում է վարժություն-  
ներ ներվերի համար։ Ներվերը և մկանները սերտ կապված են  
միմյանց հետ։ Նրանց գործունեությունը կազմում է մի ամ-  
բողջություն։ Վերջին հաշվով, ներվային ճանապարհով է, որ  
մենք դրդում ենք մկաններին։ Կծկում առաջացնելու համար։  
Ներվային ճանապարհներով մկանների գործունեությունը  
կապված է ողնուղեղի, միջին ուղեղի, ուղեղիկի և գանգուղե-  
ղի կիսաղնդերի կեղևի հետ։ Եարժումներ կատարելիս վարժ-  
վում, կատարելագործվում և մարզվում է ներվային սխտե-  
մի այդ շղթան։

Անժխտելի է նաև ֆիղիկական վարժությունների դերը  
ուղեղի սնման լավացման գործում։ Երկար ժամանակ անդոր-  
ծության մատնված ներվերի մեջ առաջ են դալիս կտզմա-  
փոխություններ, որոնց հետևանքով խանդարվում են նրանց  
շարժողական և զգացողական ֆունկցիաները։ Մայրամասային  
ներվերի վնասվածքների դեպքում, երեւար ժամանակ նրանց  
անդործության շմատնելու համար սկսոք է աշակուրչ  
հետեւ, որպեսզի բուժական ֆիղկուլտուրան նշանակվի ժա-  
մանակին։

Նկատված է, որ հոգեկան վիճակից մեծ ազդեցություն ու-  
նի ամբողջ օրդանիզմի ֆունկցիաների վրա։ Այսպես, օրինակ,  
միայն կատարվող վարժությունների մասին մտածելիս, երբ  
սկատրաստվում ենք այդ վարժությունները կատարելու,  
օրդանիզմում առաջանում են այնպիսի փոփոխություններ,  
որոնք սկսոք է ունենային վարժությունը կատարելուց հետո։ օ-  
րինակ՝ սպորտամենը, երբ սկատրաստվում է վաղք կատարե-  
լու, վաղքի հրամանին սպասելիս, ավելանում է նրա զարկե-  
րակի թիվը, արագանում է շնչառությունը, բարձրանում է ար-  
յան ճնշումը, բարձրանում է մարմնի ջերմությունը, արյան  
մեջ ավելանում է շաքարի քանակը, մեղի մեջ երբեմն երեւա-  
ն սպիտակուցային նյութեր։ Ինչպես ասացինք, սովորաբար  
այս փոփոխությունները տեղի են ունենում ֆիղիկական վար-  
ժությունը կատարելուց հետո։ Այս փոփոխությունները օրդա-

նիզմի ոհակցիան է ֆիզիկական վարժությունների հետևանքով:

Հիշյալ փոփոխությունների մեծությունը կախված է կատարվող աշխատանքի ինտենսիվությունից: Այս երևույթը ֆիզկուլտուրայի մեջ կոչվում է ստարտային շերմու:

Պրոֆեսոր Կրեստովնիկովը նկատել է, որ որքան դժվար է կատարվելիք վարժությունը, այնքան մեծ է օրգանիզմի ռեակցիան մինչ վարժություն կատարելը: Օրինակ՝ բարձրության թոփչք կատարողի մոտ, մինչև թոփչք կատարելը, զարկերակի բարախումների թիվը ավելանում է թոփչքի ձողի բարձրացման համեմատ, այսինքն, որքան բարձրանում է թոփչքի ձողը, այնքան ավելանում է սրտի կծկումների թիվը: Այստեղից պետք է հետևցնել, որ որքան կատարվելիք աշխատանքը ծանր է և դժվարին, այնքան նրա նախապատրաստելու մոմենտը լարված է:

Այս փոփոխությունները առաջ են գալիս գանգուղեղի կեղեկի աղղեցության շնորհիվ, որն անմասն չի մնում ֆիզիկական վարժություններ կատարելիս:

Ակադեմիկոս Ի. Պ. Պալլովի և նրա աշակերտների աշխատությունները մեզ սովորեցնում են, որ գանգուղեղի կեղեկի և մեր ներքին օրգանների միջև գոյություն ունի մեծ կապ և փոխադարձ ազդեցություն:

Դանգուղեղի կեղեկը ֆոմկցիոնալ տեսակետից շափազանց ճկում օրգան է, որն անսահման հնարավորություն ունի ստեղծելու նորանոր կապեր գրդիոնների և ռեակցիայի ձևերի միջև, այսինքն՝ բազմատեսակ պայմանական ռեֆլեկտոր կապեր՝ մեր մարմնի բոլոր օրգանների հետ:

Պրոֆեսոր Սարկիզով-Սերագինին ասում է.—Ֆիզիկական վարժությունները շափազանց դրական ազդեցություն ունեն մարդու հոգեկան վիճակի վրա, նրա հուզերի, վարքի, կամքի, դյուկումբոնողության, կազմակերպվածության ու կարգապահության վրա:

7. Վարժությունների ազդեցությանը սրտանորային սիստեմի վեաւ.— Մկանային յուրաքանչյուր աշխատանք բարձ-

բացնում է նյութերի փոխանակությունը օրդանիզմում։ Ամենից առաջ ավելանում է թթվածնի ծախսումը, շատանում է ածխաթթվի, հեռացումը օրդանիզմից։

Աշխատանք կատարող մեկանը պետք է ավելի շատ սննդանյութ և թթվածին ստանա, իսկ թթվածին ստացվում է սրտանոթային սիստեմի աշխատանքի միջոցով։ Սրտի կծկումներով և արյունատար անոթների ակտիվ դործումներյամբ է, որ ապահովվում է օրդանիզմի բոլոր մասերի և մասնավորապես մկանների, նորմալ սնումը թե՛ աշխատանքի և թե՛ հանգստի պայմաններում։ Հիտեաբար, որքան մեծ է կատարվող մեկանային աշխատանքը, այնքան ակտիվանում է սրտանոթային սիստեմի դործումներյունը։

Ինչո՞վ է պայմանավորված մկանային աշխատանքի մեծությունը։

Այդ հարցին պատասխաններու համար փորձեք կծկել ձեր ձեռքի մատները, մինչև նրանց ծայր աստիճան հողնելը։ Դըրանից հեռոց կամ սրտի խփոց երբեք չեք զդա։ Նման դեպքում աշխատանքն ընդհատվելու գլխավոր սլատճառը ոչ թե ընդհանուր հողմածությունն է, այլ աշխատող մկանների տեղական հողմածությունը։ Եթե աշխատանք կատարելուց առաջ և հետո հաշվեինք դարկերակի բարախումների թիվը, շափեինք արյան ճնշումը, նկատելի փոփոխություններ շեինք դունի։ Այս կարդի վարժություններն առաջ են բերում առավելապես տեղական ֆիզիոլոգիական փոփոխություններ։

Եթե ձեղ առաջարկեինք կատարել այլ աշխատանք, դիցուք 20 կրանիստ (30 վայրկյանի ընթացքում), այդ դեպքում դուք կզդաք սրտի խփոց, կունենաք որոշ շափով հեռոց, կարագանա ձեր շնչառությունը, կավելանա դարկերակի բարախումների թիվը։

Ինչով բացատրել այն, որ առաջին դեպքում 1—2 ժամ մատների անընդհատ կծկումները օրդանիզմում նկատելի փոփոխություն չառաջացրեց, մինչդեռ երկրորդ դեպքում՝ կես րոպե տևող աշխատանքը օրդանիզմում առաջ բերելով զգալի փոփոխություններու նկամն, երկրորդ դեպքում, մեր կատարած

աշխատանքն առավելապես ուներ ընդհանուր ֆիզիոլոգիական էֆեկտ, որովհետև այս դեպքում կատարվող աշխատանքն ավելի մեծ էր, քան առաջին դեպքում։ Այստեղ ժամանակի մի միավորի ընթացքում շատ ավելի խոշոր մկանային խմբեր ներգրավվեցին աշխատանքի մեջ, այսինքն՝ այս դեպքում աշխատանքին միաժամանակ մասնակցեցին և՛ աղդրերի, և՛ սրունքների, և՛ թաթերի, և՛ իրանի մկանները։ Այս բոլոր մկանային խմբերի ընդհանուր կտրվածքը, եթե համեմատեինք մատների մկանային խմբերի կտրվածքի հետ, տարբերությունը շափապանց մեծ կլինի:

Մեծ աշխատանք կատարող մկանները պահանջում են ավելի մեծ քանակի սննդանյութեր և թթվածին, և շատ ածխաթթու պետք է հեռացնել թոքերի միջոցով, ուստի սրտանոթացին սիստեմի և շնչառական օրգանների հանդեպ հարուցվեցին ավելի բարձր պահանջներ, որի հետևանքով էլ աշխուժացան արյան շրջանառության և շնչառության օրգանների աշխատանքները։

Ուրեմն, սրտանոթացին սիստեմի և շնչառական օրգանների գործունեության աշխուժացումը կախված է կատարվող մկանային աշխատանքի մեծությունից, իսկ մկանային աշխատանքի մեծությունը, ինչպես տեսանք, կախված է մեկ միավոր ժամանակում աշխատանքի մեջ ներգրավված մկանային խմբերի թվից, մկանների կծկման արագությունից և կծկումների քանակից։

Ահա հենց այս ամենի գումարն է, որ գաղափար է տալիս մկանային աշխատանքի մեծության, կամ ինչպես ասում են, վարժությունների ընդհանուր ֆիզիոլոգիական ներգործման աստիճանի մասին։

Որքան մեծ է աշխատանքի ինտենսիվությունը, այնքան մեծ է սրտանոթացին պատասխան ունեցելան։ աշխատանքի հանդեպ։

Աշխատանքի ժամանակ մոտ երեք անգամ ավելանում է սրտի կծկումների թիվը, 10 տոկոսով ավելանում է արյան շրջանառության մեջ գտնվող արյան քանակը, մոտ 3 անգամ

ավելանում է արյան հոսի արագությունը, բարձրանում է արյան ճնշումը: Հանգիստ ժամանակ, եթե մեկ րոպեում սիրտը դեպի օրդանները և հյուսվածքներն է մղում 4—5 լիտր արյուն, ապա աշխատանքի ժամանակ այդ թիվը 5 անգամ ավելանում է:

Ինչպես տեսանք, աշխատանքի ժամանակ մոտ 100 անգամ շատանում է մկանային հյուսվածքներում բացված մազանոթների թիվը: Այս բոլորը նպաստում են հյուսվածքային փոխանակության ֆունկցիաներին և ապահովում նրա նորմատնումը աշխատանքի պայմաններում:

Սրտի մկաններն ես ունեն արյունատար անոթներ, որոնք մեծ ֆիզիկական աշխատանք կատարելու դեպքում, իրենց հերթին լավացնում են սրտի մկանների սնումը:

Աշխատանքի հետեւանքով առաջացած փոփոխությունները արդյոք երկա՞ր են մնում: Դա կախված է դարձյալ աշխատանքի ինտենսիվությունից և նրա տևողությունից: Որքան մեծ է կատարվող մկանային աշխատանքը, այնքան երկար է տևում նկատված փոփոխությունների վերականգնման շրջանը:

20 կքանիստ կատարելու դեպքում, սրտի կծկումների թիվը ավելանում է 40—60 տոկոսով և 2—3 րոպեից հետո, ընդունում է իր նախկին վիճակը և վերականգնվում սրտի աշխատանքը:

Եթե աշխատանքը մեծացնենք, կմեծանա նաև վերականգնուման շրջանի տևողությունը, իհարկե, համապատասխան շափով կավելանա նաև կծկումների թիվը:

Արդյոք բոլո՞ր մարդկանց նկատմամբ է, որ նույնանման աշխատանքը սրտի գործունեության մեջ առաջացնում է միևնույն փոփոխությունները:

Իհարկե ոչ: Որքան մարդ մարզված է կտմ տվյալ աշխատանքը կատարելու սովոր, այնքան սրտանոթային սիստեմի կողմից նկատված փոփոխությունները (ոհակցիան) փոքր կլինեն և վերականգնման շրջանը կարճ, որովհետև մարզված մարդիկ նույն աշխատանքը կատարում են ավելի քիչ

ներկային և մկանային էներգիա ծախսելով։ Նրանց ռոբանիզմը աշխատանքը կատարում է ավելի էկոնոմ կօրպով։

Մարդումների շնորհիվ; սրտանոթային սիստեմի աշխատանքը դառնում է ավելի ռացիոնալ, ավելանում է սրտի մկանների ուժը, կծկումները դաւանում են այլելի հզոր, սլակացում է զարկերակի բարախումների թիւը, մեծանում է սրտի հարվածային ծավալը (յուրաքանչյուր կծկման ընթացքում սրտի ծախս փորոքից դուրս մղվող արյան քանակը), իջնում է արյան ճնշումը։

Մարդման սկզբունքը հենց աշխատանքների խնայողության մեջ է, որուածամար էլ մարդումները կիրառում ենք ոչ միայն առողջ մարդկանց նկատմամբ, այլև օգտագործում ենք հիվանդների նկատմամբ՝ համապատասխան շափակորվածության պայմաններում։

### Շարժումների ազդեցուրյանը շնչառական օրգանների վրա

Շնչառական օրդանների գործունեությունը սերտ կերպով կապված է սրտանոթային սիստեմի աշխատանքի հետ։

Ֆիզիկական աշխատանք կատարելիս, թոքերում, լրացուցիչ կերպով բացվում են մեծ քանակությամբ մաղանոթներ, որոնք հանգիստ պայմաններում աշխատանքի մեջ ներգրավված շեն։ Ֆիզիկական ծանրաթեռնվածության համապատասխան աշխուժանում է գաղափոխանակությունը, ավելանում է թթվածնի ծախսումը և ածխաթթվի հեռացումը։

Գաղափոխանակության առաջին պրոցեսը կատարվում է թոքերում։ Թոքերի միջոցով հեռացվում է արյան մեջ կուտակված ածխաթթու գազը, որի փոխարեն արյունը հարստանում է թթվածնով։ Թթվածնով հարուստ արյունը անցնում է հյուսվածքներից ածխաթթու գազը անցնում է արյան մեջ, որի փոխարեն հյուսվածքները կլանում են թթվածին։ Ինչքան ինտենսիվ է մկանային աշխատանքը, այնքան աշխուժանում է հյուսվածքային փոխանակությունը,

որն իր հերթին մեծացնում է գաղափոխանակությունը թոքերում։ Օրինակ՝ ուսային հողում մեկ րոպեի ընթացքում էլեմենտար շարժումներ կատարելիս, ծախսվում է 133,5—146,5 խ. սմ. թթվածին (Հաշված հիմնական փոխանակության համար ծախսվող թթվածինը): Նույն ժամանակամիջոցում նման օրինակ վարժություններ կոնքազդրացին հողում կատարելիս, թթվածնի ծախսը հասնում է 258,2—260,8 խորանարդ սանտիմետրի։ Պատճառը որ Որովհետև այստեղ աշխատանքին մասնակցեցին ավելի շատ մկաններ։

Հանգիստ պայմաններում ամեն անգամ շունչ քաշելիս, շնչուղիներով անցնում է մոտ 500 խորանարդ սանտիմետր օդ, մոտ 350 խ. սմ.-ն է մասնակցում գաղափոխանակությանը, մնացած 150 խ. սմ. օդը մնալով վերին շնչուղիներում; Մի մասնակցում գաղափոխանակությանը:

Թոքերի ընդհանուր կենսատարողությունը հավասար է 3000—3500 խոր. սանտիմ., որից 500-ը շնչական տարողությունն է։ Խորը շունչ առնելու ժամանակ, շնչական տարողությունը հասնում է 1500-ի, որը կոչվում է լրացուցիչ տարողություն։ Լրիվ արտաշնչման ժամանակ, մենք կարող ենք թոքերից հեռացնել ևս 1500 խ. սմ. օդ, որը կոչվում է պահեստային տարողություն։ Ահա այս երեքի գումարը կլորացրած թվերով կազմում է 3000—3500 խ. սմ.։

Թոքերում կա նաև այսպես կոչված մնացորդային օդ, որի քանակը մեզ հայտնի չէ։ Մնացորդային օդը մնում է թոքերում, նույնիսկ լրիվ արտաշնչելուց հետո։ Իմանալով այս հաշիվները, մենք կարող ենք ասել, որ թոքերի լրիվ օդափոխման համար հարկավոր կլինի 10 անգամ սովորական շնչառում կամ 4—5 անգամ խորը շնչառություն։ Եթե օրգանիզմը շատ թթվածնի պահանջ չունի, շնչառության վարժությունները պետք է կատարել 4—5 անգամ։

Տեսնենք, թե մեկ րոպեում թոքերով որքան օդ է անցնում։ Մեկ րոպեում, հանգիստ ժամանակ, մենք շնչում ենք 16—20 անգամ, շնչական տարողությանը կես լինով հաջված,

Թոքերի մեկ ըոպեի նորողությունը հավասար կլինի 8—10 լիտրի:

Աշխատանքի ժամանակ շնչառությունը թե՛ արագանում է. թե՛ խորանում է, և թոքերով անցնող օդի ծավալը կարող է հասնել մինչև 110—150 լիտրի: Համասկատասխան շափով էլ ավելանում է թթվածնի ծախսումը: Եթե թթվածնի ծախսումը մեկ րոպեում հանգիստ վիճակում 180—200 խ. սմ. է, ապա ծայրահեղ ինտենսիվ աշխատանքի ժամանակ հասնում է 5000 խ. սմ.-ի: Իհարկե, այդ կարգի ինտենսիվ աշխատանք բուժական ֆիզկուլտուրայում դոյլություն չունի, բայց այս հարաբերությամբ կարող ենք գաղափար կազմել, թե ֆիզիկական վարժություններ կատարելիս որքան են աշխատանքում գաղափարիսակության պրոցեսները:

Թոքերի այսպիսի մեծ աշխատանքն անշուշտ զարգացնում է շնչառական մկանները, կրծքավանդակի շարժումները. և ստոծանու կծկումները կատարվում են ավելի մեծ թափով:

Այժմ մի քանի խոսք շնչառության վարժությունների մասին:

Ամենալավ շնչառության վարժություններն այն վարժություններն են, որոնք առավել շափով մեծացնում են գաղափարիսակությունը հյուսվածքներում, հետևապես և թոքերում: Քայլը, վազքը, լողը, թիավարությունը, դահուկային սպորտը և այլ նման վարժություններն առավել շափով զարգացնում են սրտանոթային սիստեմի աշխատանքները և թոքերի գործունեությունը. բայց միշտ չէ, որ մենք կարող ենք դիմել այդ վարժությունների կատարմանը:

Բուժական ֆիզկուլտուրայի սկարապմունքներում հատուկ տեղ ենք տալիս շնչառության վարժություններին, հետևում ենք, որ բոլոր շարժումների ժամանակ շնչառությունը կատարվի կանոնավոր:

Շնչառությունը մենք տարբերում ենք.

1. Թիաֆրազմալ (ստոծանային) կամ որովայնային, երբ շնչառությունը առավելապես կատարվում է որովայնային մամուկի և ստոծանու շարժումների միջոցով:

2. Կրծքային կամ կողային, երբ շնչառությունը կատարվում է առավելապես կրծքավանդակի շարժումների միջոցով: Եթե շնչառությունը կատարվում է միաժամանակ և՛ դիաֆրագմալ, և՛ կրծքային, դառնում է լրիվ շնչառություն: Պետք է ձգտել, որ շնչառությունը լինի լրիվ: Այս տիպի շնչառությունը համարվում է լիակատար, որովհետև լավ պայմաններում է կատարվում կրծքավանդակի ներծծող դերը և արյան հոսումը դեպի սիրտը՝ հեղտանում է:

Շունչ առնելու ժամանակ՝ միջկողային մեխանների կրծքման շնորհիվ, կողերը բարձրանում են վեր, միաժամանակ ցած է իջնում ստոծանին, իսկ կրծքավանդակի խոռոշը մեծանում է. սա շնչառության ակտիվ ֆազն է և ավելի կարճ է տևում: Արտաշնչման ժամանակ կողերը իրենց ծանրության շնորհիվ, իջնում են ցած, ստոծանին բարձրանում է, կրծքավանդակի խոռոշը փոքրանում. սա շնչառության պասսիվ ֆազն է և կատարվում է ավելի դանդաղ:

Բուժական ֆիզկուլտուրայում շնչառման և արտաշընշման տևողությունը պրակտիկ կերպով կատարվում է մոտավորապես այսպես. 2—5 վայրկյան տևում է շունչ առնելու պրոցեսը, 3—8 վայրկյան՝ արտաշնչելը: Հաջորդ շնչառումը ակտիվացնելու համար, նպատակահարմար է արտաշնելոց հետո ունենալ մի փոքր ընդմիջում՝ 1—3 վայրկյան տևողությամբ:

Շունչ պահելը, մանավանդ շնչառման դափաթում, առաջ է բերում թոքերի ալվեոլների ձգում, թոքային մազանոթները լցվում են արյունով, թոքերի բարվածությունն ընկնում է, առաջ են գալիս կանգառան երևույթներ, որից և դժվարանում է սրտի աշխատանքը, մանավանդ նրա աջ մասում: Նման երևույթներ, պատահում են ճիգի մոմենտին՝ ուղեկցվող շարժումներ կատարելիս. օրինակ՝ ծանրություններ բարձրացնելիս, մարմնամարդության գործիքների վրա պարապելիս, կամ ազատ շարժումներ կատարելիս, երբ շունչը պահում ենք:

Բուժական ֆիզկուլտուրայի պարապմթանքների ժամանակ:

նակ պետք է խուասփել ճիգի մոմենտից։ Ճիգից խուասփելու համար, անհրաժեշտ է, որ բոլոր շարժումներն ուղեկցըվեն շնչառության ճիշտ կատարումով։ Շնչառության վարժությունները կարելի է կատարել պառկած, նստած կամ կանգնած։

Մեջքի վրա պառկած վիճակում՝ մի ձեռքը դնել փորին, մյուսը՝ կրծքին, սկսել խորը և լրիվ շնչել նախ կրծքով, ապա փորով և հակառակը, ձեռքերով հետևամ ենք շարժումները ճիշտ կատարելու համար։ Նման վարժություններն օգտակար են սրտի հիմանդրություն ունեցող մի շարք մարդկանց համար։ Պառկած վիճակում շնչառությունը բավարկանաշափ լիակատար է, նախ՝ ստոծանու շարժումներն ավելի լրիվ են, ապա նաև բոլոր մնացած մկանները հանգստի մեջ են և աշխատում են միայն շնչական մկանները։ Մարմնի հորիզոնական վիճակն ավելի է բարձրացնում կրծքավանդակի ներծծող դերը, տրով հեշտանում է սրտի աշխատանքը։

Շնչառության վարժությունները նստած կատարելիս, խորհուրդ է տրվում շնչառման ժամանակ փորը ներս քաշել, լայնացնել կրծքավանդակի ստորին մասը, ձեռքերը դնել կողքին և արտաշնչելիս՝ թեթևակի սեղմել կողերին։

Ամենագլխավորն այն է, որ շնչառությունը զուգորդվի՝ համատեղվի կատարվող շարժումների հետ։ Բոլոր շարժումների ընթացքում խորհուրդ է տրվում շնչել, երբ նպաստավոր պայմաններ են ստեղծվում կրծքավանդակի և որովայնախորշի լայնացման, համար և արտաշնչել կրծքավանդակի սեղմվելու և որովայնախորշի փոքրացման ժամանակ։

Օրինակ, դլուխը և ուսերը բարձրացնելիս, ձեռքերը պարզելիս կամ բարձրացնելիս, իրանը հետ թեքելիս, ուժը ետ կամ մի կողմ տանելիս պետք է շունչ տռնել։

Գլուխը, ուսերը իջեցնելիս կամ կողերից առաջ բերելիս, իրանը առաջ թեքելիս, ուժը առաջ բերելիս՝ պետք է արտաշնչել։

Կան շարժումներ, որոնց ժամանակ շնչառությունը պետք է թողնել ազատ, դրանք գլխավորապես երկկողմանի։ Կա-

ուարվող վարժություններն են, օրինակ՝ իրանի դարձումները, թեքումները՝ աշ և ձախ:

Ծնչառությունը պետք է կատարել քթով: Քթով շնչելիս օգը տաքանում է, և որոշ շափով խոնավանում, օդի հետ ելքած փոշին նստում է քթի ըործաթաղանթներին, և այդպիսով թոքերը գնացող օգը որոշ վերամշակման է ենթարկվում: Քթով էլ արտաշնչում ենք, որպեսզի խոնավ օդը հետ անցնելով պահի խոնավությունը:

Ինտենսիվ աշխատանք կատարելիս հարկավոր է լինում շնչել նաև բերանով: Թերանով շնչելն օգտագործվում է բուժական ֆիզկուլտուրայի սլրակտիկայում, հատուկ դիպքերում արտաշնչումը զարդացնելու համար, նման դեպքում արտաշնչումը ուղեկցվում է ձայնային որևէ խնդրով, ձայնավոր կամ բաղաձայն տառեր արտասանելով: Միջկողային մկանների զարգացման համար շունչ առնելը և արտաշընչելը կատարում ենք կտրուկ և ուժով:

Շարունակ շնչառության հետևելը (հաշվելը) շնչառական ակտի վրա բացասաբար է ազդում, շնչառությունը դառնում է արհեստական և խանգարվում է նրա ավտոմատիզմը:

Վարժությունների ուսուցման շրջանում նպատակահամար է ուշադիր հետևել շնչառության կանոնների ճիշտ կատարմանը: Հետադայում վարժությունների ավտոմատ կատարմամբ՝ շնչառությունը նույնպես դադարում է կամային սկտ լինելուց:

Թոքերի գործումներությանը մեծ օդուտ է բերում քայլելը, մանավանդ դահուկներով: Այստեղ շարժումների ոիթմը զուգորդվում է շնչառության ոիթմին, ծայրանդամների, ոիթմիկ կծկումները, շափակոր ֆիզիոլոգիական աշխատանքը, հիգիենիկ պայմանները, մաքուր օդը, մանավանդ ձմռանը, բարենպատ աղղեցություն են գործում թոքերի զարգացման վրա:

Բուժական ֆիզկուլտուրայի ականավոր մասնագետ պրոֆեսոր Մաշկովը պահում է, որ՝ շնչառությունը պետք է

լինի հանդարտ և խորը, շնչառական ապարատի բոլոր հատվածների մասնակցությամբ։ Միայն այն վարժություններն են համարվում շնչառության վարժություններ, որոնք կատարվում են ազատ, առանց արտահայտված ճիղի, առանց ներվային ու հոգեկան լարվածության։

Բուժական ֆիզիոլոգիայի պրակտիկայում մեթոդական մոտեցման ճշտությունը պայմանավորված է մարմնամարդական և շնչառության վարժությունների նորատակահարմար հարաբերությամբ։

Ֆիզիկական վարժությունների միջոցով մեծանում է թոքերի կենսատարողությունը, ամրանում են շնչառական ապարատի մկանները, կանոնավորվում է շնչառության ռիթմը, շնչառությունը դառնում է խորը և լիակատար։

## Բ. ԻՆՉՈՒՍ ԵՆՔ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒԺՄԱՆ ՀԱՄԱՐ

Մենք տեսանք, թե ինչ ֆիզիոլոգիական առղեցություն ունեն ֆիզիկական վարժությունները՝ տարրեր օրգանների և սիստեմների վրա։ Բայ էության, մեր նկարագրած բոլոր փոփոխությունները օրգանիզմում հանդես են գալիս միաժամանակ։ Մեր օրգանիզմը մի ամբողջություն է, բոլոր օրգանների և սիստեմների ներդաշնակ աշխատանքով։ Մի օրգանի ֆունկցիան սերտ կերպով կապված է մյուս օրգանների հետ։ Այս իսկ պատճառով ֆիզիկական յուրաքանչյուր վարժություն միաժամանակ ներդործում է ամբողջ օրգանիզմի վրա։ Ներկա դեպքում բուժման համար օգտագործվող ֆիզիկական վարժություններին նայում ենք որպես ընդհանուր ներդործող գրգորիչ։

Բուժական ֆիզիոլոգիայում մարմնական շարժումները հանդիսանում են այն բիոլոգիական գրգորիչները, որոնք խթան են դառնում օրգանիզմի բիոլոգիական և ֆիզիոլոգիական պրոցեսների աշխատացման համար։ Սրա հետեւանքով կատարելագործվում է մարդու բոլոր օրգանների

գործունեությունը, ստարբեր օրգանների և սիստեմների միջև եղած համագործակցությունը դառնում է կատարյալ, ինչպես մարդու առողջ վիճակում, նույնպես և նրա հիվանդության ժամանակ։ Բարձրանում է հիվանդի դիմադրողականությունը արտաքին միջավայրի տարբեր գրգորիչների նըկատմամբ (պրոֆ. Մաշեկով)։

Բուժական ֆիզկուլտուրան համարվում է բուժման ակտիվ մեթոդ։ Զկա բուժման մեզ հայտնի մի ուրիշ մեթոդ, որի ժամանակ հիվանդն այնքան ակտիվ գործունեություն ունենա իրեն բուժման գործում, որքան բուժական ֆիզկուլտուրայով պարապելիս։

Բուժական ֆիզկուլտուրայի բնորոշ կողմերից մեկն էլ հիվանդի մարզումն է ֆիզիկական վարժությունների միջոցով։ Մարդումը բարդ հոգեֆիզիկական պրոցես է, որտեղ ներդրավում են հիվանդի ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան կարողությունները մի ընդհանուր արդյունքի հասնելու համար։

Բուժական ֆիզկուլտուրան, մի շարք անհրաժեշտ կանոնների կիրառման դեպքում, տալիս է լավագույն արդյունքներ։

1. Ներգործման միջոցները պետք է կրեն սիստեմատիկ բնույթ, երբեմն օրվա մեջ պետք է պարապել մի քանի անգամ։

2. Որոշակի արդյունքի հասնելու համար ֆիզիկական վարժությունները պետք է օգտագործել երկար ժամանակով։

3. Վարժությունները պետք է աստիճանաբար ավելացնել և բարդացնել։ Անպայման պետք է հետեւել հիվանդ օրգանիզմի պատասխան-ռեակցիային։ Հիվանդի նկատմամբ աստիճանաբար մեծացվող պահանջը մորիլիզացիայի է ենթարկում նրա օրդանիզմի ֆիզիոլոգիական հնարավորությունները, որով և բարձրանում է հիվանդի դիմադրողականությունը՝ աշխատանքի և կենցաղի պայմանների ֆունկցիոնալ սրահաջների նկատմամբ։

4. Մարդումը լինում է ընդհանուր և հատուկ։ Ընդհանուրի ժամանակ շեշտը դրվում է այն վարժությունների վրա, որոնք

ազդում են օրգանիզմի ընդհանուր ամրացմանը: Բարձրացնում են ընդհանուր մարզվածությունը (վարժություններ սրտանոթային սիստեմի ամրացման համար, վարժություններ առավելացնելու մեջ մկանային խմբերի համար):

Հատուկ մարդումը նպատակ ունի վարդացնել այն ֆոնկցիաները, որոնք խանգարվել են վնասվածքի կամ հիվանդությունների պատճառով: Այս դեպքում, բացի ընդհանուր ազդող վարժություններից, օգտագործում են նաև այնպիսի շարժումներ, որոնք անմիջական ազդեցություն կունենան վնասված հատվածի վրա:

Ֆիզիկական վարժությունները բուժման նպատակով օգտագործելու գլխավոր սկզբունքը՝ այդ վարժությունների շափակորումն է:

Ինչ միջոցներով ենք շափավորում ֆիզիկական վարժությունները.

1. Ելման նպատակահարմար դրություններ ընդունելու միջոցով: Ելման դրությունների միջոցով կարող ենք աշխատանքի մեջ ներգրավել տարրեր մկանային խմբեր, դրանով խսկ մեծացնելով կամ վոքրացնելով վարժությունների ֆիզիոլոգիական ներգործությունը:

Օրինակ, մեր նպատակն է տալ վարժություն որովայնի մամուլի համար: Այդ վարժությունը կարելի է կատարել մարմնամարդական գործիքներին հենվելու կամ կախվելու միջոցով, անկյուն պահելով: Այս դեպքում որովայնի մամուլը ճիշտ է աշխատում, բայց գուցե ավելի շատ են աշխատում իրանի, ուսագլխի և թևերի մկանները. ուրեմն մենք մեր հիմնական նյատակից վրիպեցինք: Իսկ եթե մեջքի վրա պառկած վիճակում կատարվեն վարժությունները՝ որովայնի մամուլի համար (պառկած տեղից ոտքերը բարձրացնել և իջեցնել), մնացած բոլոր մկանները կլինեն հանգիստ, ուրեմն ընդհանուր ներգործությունը կլինի սահմանափակ:

2. Վարժությունները շափավորելու գործում մեծ նշանակություն ունի շարժումների մեջ ներգրավված մկանային խմբերի ծավալը, նրանց թիվը: Ինքնին հասկանալի է, որ

ինչքան մեծ թվով մկաններ են մասնակցում տվյալ աշխատանքին, այնքան կատարվող աշխատանքի ծանրաբեռնվածությունը կլինի մեծ:

3. Վարժությունների կրկնության քանակով հեղտությամբ կարող ենք մեծացնել կամ փոքրացնել ընդհանուր ֆիզիոլոգիական ծանրաբեռնվածությունը: Հիգիենիկ մարմարզության դասերում յուրաքանչյուր վարժություն կատարում ենք 6—8 անգամ, այդ վարժությունները ավելի կամ պակաս կատարելով, դասի ծանրաբեռնվածությունը մեծանում կամ փոքրանում է:

4. Կատարիլող վարժությունների արագությունը և տեմպը նույնպես էական նշանակություն ունի ընդհանուր ֆիզիոլոգիական ծանրաբեռնվածության համար: Ժամանակի մի միավորում որքան շատ վարժություններ կատարենք, այնքան ֆիզիոլոգիական ներգործությունը մեծ կլինի:

5. Նշանակություն ունի նաև այն, թե ինչ շափով և ինչ տիպի գործիքներ ենք օգտագործում վարժությունների համար: Այս տեսակետից վարժությունները բաժանում ենք.

ա) գործիքների վրա, երբ պարապողը ինքն է բարձրանում գործիքին՝ մարմնամարզական պատ, նստարան:

բ) գործիքներով, երբ պարապողը շարժումները կատարում է գործիքներով՝ գնդակներով, մեղիզինքով, կցաղընդերով.

գ) վարժություններ առանց գործիքների, ազատ շարժումներ:

Վերև նշված հինգ էլեմենտների փոխհարաբերությամբ կարելի է կազմել բազմաթիվ դասեր, ֆիզիոլոգիական տարրեր ներգործությամբ, տարրեր ձևի և բովանդակությամբ:

Ինչպես որ երաժշտության մեջ ընդումենը 7 ձայնանիշներով, նրանց տարրեր վարիանտներով գրված են հազարավոր սիմֆոնիաներ, այնպես էլ ֆիզիկական վարժությունների հիմնական էլեմենտների տարրեր վարիանտներով կարելի է կազմել շափականց շատ տարրեր դասեր, որոնց միջոցով հնարյակոյն կլինի բուժել բազմաթիվ հիվանդություններ:

## ԲՈՒԺԱԿԱՆ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԶԵՎԵՐԸ

1. Բաւժական մարմնամարզական դասեր.— Տարբեր հիվանդությունների ժամանակ, ելնելով հիվանդի ընդհանուր վիճակից, նրա մարզվածության աստիճանից, կազմվում են բուժական մարմնամարզության դասերը։ Յուրաքանչյուր դաս կազմված է 3 մասից՝ նախապատրաստական, հիմնական և եղրափակիչ։ Հիմնական մասում դրվում է տվյալ դասի խընդիրը, իսկ նախապատրաստական և եղրափակման մասերը ելնում են հիմնական խնդրից։ Դասի տևողությունը կարող է լինել 5 րոպեից մինչև 30—40 րոպե։ Դասերը կարելի է կազմել ինչպես անհատական, նույնպես և խմբական պարագմունքների համար։ Դասերը կարելի է անցկացնել հիվանդների պառկած, նստած կամ կանգնած վիճակում։ Յուրաքանչյուր դաս տանի իր ֆիզիոլոգական կորագիծը, այսինքն՝ դասի ընթացքում ընդհանուր ծանրաբեռնվածությունը բարձրանում է մինչև հիմնական մասի վերջը, ապա այստեղից աստիճանաբար, ծանրաբեռնվածությունը պակասեցնելով, դասը վերջանում է։

2. Հիգիենիկ մարմնամարզության դասը.— Այստեղ դասը կազմվում է ընդհանուր շափակոր ներդրման բնույթով։ Դասի մեջ աշխատում են ներդրավել գրեթե բոլոր հոգերը և մկանները։ Ամբողջ դասը տևում է 10—12 րոպե, որի ընթացքում կատարվում են 7—9 վարժություններ։ յուրաքանչյուր վարժություն կրկնում են 6—8 անգամ։ Վարժություններն սկսում են փոքր մկանային խմբերից (վարժություններ ձեռքի համար) աստիճանաբար անցնում են մեծ մկանային խմբերին (իրանի, ստորին վերջավորությունների համար), ապա որևէ գրգուիչ վարժություն, ուստի ուներ կամ վազք 10—30 վայրկյանի շափ։ Վերջում շնչառության վարժություններ։ Բոլոր շարժումները պետք է ուղեկցվեն շնչառության ճիշտ կանոններով։ Հիգիենիկ մարմնամարզությունը կարելի է կատարել՝ պառկած, նստած կամ կանգնած։

Շաղիոհաղորդումների միջոցով արվող առավատյան

մարմնամարզության դասերն ունեն հիգիենիկ բնույթ, որոնց  
խորհուրդ է տրվում հետևել:

3. Բուժական ֆիզկուլտուրայի երրորդ ձեր.— Դա  
առանձին հանձնարարությունների կատարումն է, երբ  
բժշկի կամ մեթոդիստի կողմից հիվանդին հանձնարարվում է  
օրվա ընթացքում մի քանի անգամ կատարել այս կամ այն  
վարժությունը:

Բուժական ֆիզկուլտուրայի առավելություններից մեկն էլ  
այն է, որ նրա բոլոր ձևերը՝ բուժական մարմնամարզությու-  
նը, հիգիենիկ մարմնամարզությունը և այլ հանձնարարու-  
թյունները մեծ հաջողությամբ կարելի է կատարել տանը,  
միայն անհրաժեշտ է պարբերաբար դիմել բժշկի, նրանից  
հետագա պարապմունքների համար նոր խորհուրդներ և  
հանձնարարություններ ստանալու:

#### Գ. ԲՈՒԺԱԿԱՆ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԱԿԱՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ,

ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ

#### ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Բուժական ֆիզկուլտուրայի ցուցումները շատ ընդարձակ  
են, դրա համար նախ թվենք հակացուցումները: Բուժական  
ֆիզկուլտուրայով շի կարելի պարապել ընդհանրապես բո-  
լոր սուր բորբոքումների ժամանակ, բոլոր այն դեպքերում.  
Երբ օրգանիզմի ջերմությունը, անկախ նրա պատճառներից.  
37°-ից բարձր է: Չի կարելի պարապել արյունահոսություն-  
ների դեպքում, օրգանիզմի ընդհանուր հյուծվածության ժա-  
մանակ, հիվանդի ծանր դրության դեպքում, երբ վնասված  
հատվածում կամ հիվանդ օրգանում ուժեղ ցավեր կան: Ահա  
այս բոլոր դեպքերում վարժությունների կատարումը հակա-  
ցուցվում է: Բայց այս հակացուցումները ժամանակավոր  
բնույթ ունեն: Թվարկված երեսութներն անցնելուց հետո,  
կարելի է պարապել բուժական ֆիզկուլտուրայով: Բուժական  
ֆիզկուլտուրայի նշանակումները բոլոր “հիվանդությունների  
ժամանակ պետք է կատարվեն բժշկի կողմից, և պարապ-  
չումքները պետք է տարվին նրա հսկողությամբ, անկախ

նքանից, թե հիվանդը որտեղ է պարապում՝ տա՞նը թե բուժ-  
հիմնարկում:

Ինչպիսի՞ դեպքերում ավելի էֆեկտիվ կերպով կարելի  
է վարժություններն օգտագործել բուժման նպատակով:

1. Բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտ է վնասված  
հատվածի անատոմիական ամբողջությունը և ֆունկցիան  
վերականգնել: Այստեղ նկատի ունենք ուկրի փակ և բաց  
կոտրվածքները, փափուկ հյուսվածքների վնասվածքները,  
ողնաշարի և կոնքի կոտրվածքները, ներվային սիստեմի  
վնասվածքների և այլ տրավմաների դեպքերը:

Նման դեպքերում բուժական ֆիզկուլտուրայի խնդիր-  
ներն են՝

ա) պայքարել անկողնի ռեժիմի հնտ կատված բարդու-  
թյունների դեմ, ինչպիսիք են՝ պառկելախոցերը, խրոնիկա-  
կան փորկապությունները, մկանների հետաճման երևույթ-  
ները, հողերի շարժումների սահմանափակումը և այլն: Այս  
երևույթները կանխելու համար պետք է բուժական ֆիզկու-  
լտուրան, ըստ հնարավորին, շուտ նշանակել.

բ) ուժեղացնել օրգանիզմի ուղեներացիոն պրոցեսնե-  
րը՝ տրավմայի հետևանքով՝ առաջացած անատոմիական  
թերությունները վերացնելու համար: Այստեղ շեշտը դրվում  
է այն վարժությունների վրա, որոնք ունեն ընդհանուր ֆի-  
զիոլոգիական ներգործություն՝ լավացնում են արյան շըր-  
ջանառությունը, նյութերի փոխանակությունը, որով լավանում  
է վնասված հատվածի սնումը ու արագանում է բուժումը:

Բացի ընդհանուր ներգործող վարժություններից, տըր-  
գում է նաև տեղական ազդող վարժություններ, դարձյալ  
վնասված հատվածի սնումը լավացնելու և ներվային ճա-  
նապարհներն ու մկանները լավ վիճակում պահելու համար:  
Օրինակ, ակտիվ շարժումներ՝ վնասված հատվածից ցած-  
դունվող ծայրամասերի համար, վնասված հատվածին հա-  
մապատասխան՝ առողջ ծայրանդամների սիմետրիկ մկան-

ների ակտիվ կծկումներու թուժման ընդհանուր պրոցեսի այս շրջանում բուժական ֆիզկուլտուրան օժանդակ դեր է կատարում:

գ) երբ վնասված հատվածի անատոմիական թերությունն արդեն վերականգնված է, բուժական ֆիզկուլտուրայի խնդիրն է՝ համապատասխան վարժությունների միջոցով վերականգնել վնասված հատվածի մկանների ուժը, նրանց կծկողականությունը և հոդերի շարժումությունը:

Այս շրջանում բուժական ֆիզկուլտուրան առաջատար դեր ունի, որովհետև շարժական ունակությունների վերականգնման համար ուրիշ ավելի էֆեկտիվ մեթոդ, քան վարժություններն են, մենք չգիտենք:

2. Բուժական ֆիզկուլտուրան լայն կիրառում պետք է ունենա կեցվածքի շեղումների դեմ պայքարելու համար: Դարձական հասակ ունեցող որոշ երեխաների մոտ մեծ մասամբ մկանների թուլության հետևանքով, առաջ են գալիս ողնաշարի ծռվածքներ: Այդպիսի երեխաներին պետք է ընդդրուել ուղղիչ մարմնամարզության պարապմունքներում: Երենում կան բուժական ֆիզկուլտուրայի հատուկ սրահներ, որոնք այդ ուղղությամբ մեծ աշխատանք են տանում: Անհրաժեշտ է, որ ծնողներն աշակցեն այդ գործին: Ուղղիչ մարմնամարզության պարապմունքները կարելի է կազմակերպել նաև դպրոցներում, ֆիզկուլտուրայի դասառների և դպրոցական բժիշկների միջոցով:

3. Բուժական ֆիզկուլտուրան պետք է օգտագործել գրեթե բոլոր հիվանդություններից հետո, մանավանդ սուր վարակիչ հիվանդություններից հետո, օրգանիզմը աստիճանաբար աշխատանքում ու կենցաղում կիրառվող անհրաժեշտ շարժումներին նախապատրաստելու նպատակով: Նման դեպքերում հիվանդության հիմնական երևույթներն անցնելուց հետո, բժշկի խորհրդով, հիվանդը դեռ պառկած ժամանակ, պետք է կատարի հիգիենիկ բնույթի վարժություններ: Անկողնի ռեժիմում կատարվող հիգիենիկ վարժությունների միջոցով աստիճանաբար աշխատանքում ենք արյան շրջանա-

ռությունը, նյութերի փոխանակությունը, շնչառության . . օրդանների . . գործունեությունը, լավանում է մարսողական տրակտի աշխատանքը, բարձրանում է հիվանդի տրամադրությունը, լավանում է ախորժակը: Այս բոլորը նպաստում են - հիվանդի ուժերի արագ վերականդնմանը:

Այն օրվանից, երբ հիվանդին կթույլատրվի նստելու, կարելի է վարժություններ կատարել նստած վիճակում, աստիճանաբար մեծացնելով վարժությունների ընդհանուր ֆիզիոլոգիական ներգործությունը, հիվանդին նախապատրաստում ենք անկողնի ռեժիմի և շարժական ռեժիմի միջև եղած մեծ տարրերությունը:

Բոքային բորբոքումներից և հատկապես թոքամզի (աղլեվրայի) բորբոքումներից հետո բուժական ֆիզիոլոգության, իացի օրդանիզմի ընդհանուր ամրացման նշանակությունից, ունի նաև հատում նշանակություն: Այստեղ շընչառության մարմնամարզության միջոցով պետք է պայքարել թոքամզի կապումների դեմ, որպեսզի հետագայում կրծքավանդակի դեֆորմացիաներ չստացվեն:

4. Բուժական ֆիզկուլտուրան հաջողությամբ կարելի է կիրառել նաև կանացի հիվանդությունների ժամանակ: Սիստեմատիկորեն կատարվող պարապմունքները լավացնում են սրտանոթային և շնչառական օրդանների աշխատանքը. կարգավորիչ ազդեցություն ունեն ներվային սիստեմի և ներզատական գեղձերի վրա: Ֆիզիկական վարժություններն ամրացնում են որովայնի մամուլի և կոնքի հատակի մկանները, որի շնորհիվ ապահովվում է արգանդի նորմալ դիրքը կոնքի խորշում: Որովայնի մամուլի և կոնքի մկանների սիստեմատիկ կծկումները լավացնում են արգանդի և ձվարանների սնումը, կանոնավորում դաշտանի ընթացքը:

Նորմալ ընթացող հղիությունը շի հակացուցում բուժական ֆիզկուլտուրայի պարապմունքներին: Վերջին տարիներս Միության շատ կոնսուլտացիաներում մեծ շահով կիրառում

են շափավոր ֆիզիկական վարժությունների կատարումը հղիության դրեթե ամբողջ շրջանում։ Այս դեպքում ֆիզիկական վարժությունները շափավորվում են, ելնելով սրարապողի ֆիզիկական պատրաստականության աստիճանից և հղիության ժամկետից։ Հղիության առաջին երեք ամիսների ընթացքում վարժությունները կատարվում են հատուկ զգուշությամբ։ Վարժությունները սահմանափակվում են վերջին 2 ամիսների ընթացքում։

Ֆիզիկական վարժությունների ճիշտ օգտագործումը բարենպաստ ազդեցություն ունի հղիության ողջ ընթացքի, ծննդաբերության և հետծննդյան շրջանի վրա։ Հետծննդյան շրջանում ֆիզիկական վարժությունները նպաստում են արդանդի նորմալ շափերի վերականգնմանը և որովայնի մամուլը պահում են լավ վիճակում։

Բոլոր պարագմոնները պետք է տարվեն կանանց կոնսուլտացիաների խորհուրդներով և հսկողությամբ։

5. Բուժական ֆիզկուլտուրան ճարպային փոխախության խանգարման ժամանակ.— Փոխանակության հիվանդությունների ժամանակ հյուսվածքներում թթվեցման պրոցեսները կատարվում են թերի և նրա զանազան մասերում կուտակվում են լրիս շթթված նյութեր։ Երբ խանգարվում է ճարպային փոխախության վերաբերյալ կուտակում, ճարպը կուտակվելով որովայնախորշում, բարձրացնում է ստոծանին և մեխանիկորեն դժվարացնում է սրտի աշխատանքը, ազդում է արյան շրջանառության և շնչառության օրգանների վրա, նվազեցնում է մարդու աշխատումակությունը։ Աշխատանքի ընթացքում առաջ է գալիս սրտի խփոց, հեռոց, ընդհանուր թուլություն։

Ճարպային փոխախության խանգարումները, հատկապես գիրության բուժման գործում, բուժական ֆիզկուլտուրան մեծ դեր ունի դեղորայքային և սննդային բուժման կոմպլեքսում։

Ֆիզիկական վարժությունները լավացնում են թթվեց-

ման պրոցեսները։ Վարժություններ կատարելիս ուժեղանում է ճարպի այրումը, ուժեղանում են երիկամների և մաշկի արտազտիչ ֆունկցիաները, որից պակասում է ավելորդ հետովի քանակը հյուավածքներում։

Վարժությունները վերացնում են որովայնի խռովի կանգառան երևույթները, իշեցնում են նրա փրկածությունը, մարզում են սրտանոթային սիստեմը և շնչառության օրգանները, մեծացնում են մարդու տոկունությունը՝ ֆիզիկական աշխատանքի հանդեպ։

Գիրության ժամանակ խորհուրդ է տրվում կատարել ամենօրյա հիգիենիկ մարմնամարզություն, զբոսանքներ, երթեր՝ հեծանիվով, ձիավարությամբ։ Բուժական մարմնամարզությամբ պարապելիս պետք է հատուկ տեղ տալ արովայնային մամուլի ամրացման վարժություններին, հետևել շնչառության կանոնների ճիշտ կատարմանը, աստիճանաբար մեծացնել վարժությունների ընդհանուր ֆիզիկական ծանրաբեռնվածությունը։ Լավ արդյունքներ ստանալու համար պարապմունքները պետք է կրեն մշտական և սիստեմատիկ բնույթ։

Այս դեպքում օգտակար են նաև մասսաժի պրոցեդուրները։

6. Բուժական ֆիզկուլտուրան սրտանոթային սիստեմի հիվանդությունների ժամանակ.— Բուժական ֆիզկուլտուրան մեծ կիրառում ունի սրտի դրեթե բոլոր հիվանդությունների ժամանակ, բացառությամբ սրտի մկանների սուր բորբոքման հիվանդությունների և սրտի այն հիվանդությունների դեպքում, երբ տեղի են ունենում արյան շրջանառության ծանր խանգարումներ։

Բուժական ֆիզկուլտուրայի պարապմունքները պետք է ոկսել միայն բժշկի խորհրդով և նրա մշտական հսկողությամբ։ Բուժական ֆիզկուլտուրայի մեթոդիկան այս դեպքում չի ելնում հիվանդության անոնից՝ այն բանից, թե սրտի փականների՝ արատ ունենք, թե՝ սրտի մկանների թուլություն։ Պարապմունքների մեթոդը դրանից գրեթե չի փոխվում։ Սրտի հիվանդությունների ժամանակ, վար-

ժություններով ծանրաբեռնելիս, պետք է անպայման ելնենք այն դրությունից, թե ինչ շափով են խանգարված սրտանոթային սիստեմի ֆունկցիաները, կա՞ն արդյոք արյան շրջանառության խանգարման երևույթներ, և ինչ աստիճանի են դրանք:

Սրտի հիվանդության ժամանակ բուժական ֆիզկուլտուրայի միջոցառումները պետք է ուղղված լինեն առաջացած ֆունկցիոնալ շեղումների դեմ; Սրտի հիվանդության ժամանակ, կարող են լինել հետեւյալ ֆունկցիոնալ շեղումները՝ հյուսվածքներին թթվածին մատակարարելու անբավարարությունը, կանգառման երևույթներ և այսուցներ՝ օրգանիզմի զանազան մասերում, շնչարդելություն և սրտի խփոց՝ վիոքը ֆիզիկական աշխատանք կատարելիս:

Ինչ հիմք ունենք սրտի հիվանդներին ֆիզիկական վարժություններ տալու, քանի որ առաջներում ընդունված է ըսրտի հիվանդներին միայն հանդիսատ տալ:

Այժմ յան կլինիցիատները և ֆիզիոլոգները արյան շրջանառությանը նայում են որպես մի ընդհանուր սինթետիկ սլոցեսի: Սիրտը արյան շրջանառության դլխավոր և կենտրոնական օրգանն է, բայց ոչ միակը: Սրտից դուրս գտնվող այլ օրգանների և սիստեմների դերը նվազ չէ. կան օրգաններ և սիստեմներ, որոնք նույնպես մեծ շափով նպաստում են արյան շրջանառությանը և հեշտացնում են սրտի աշխատանքը: Բուժական ֆիզկուլտուրայի միջոցառումները դիսավորակեն նպատակ ունեն ակտիվացնելու այդ օգնական օրգանները:

Այժմ տհանենք թե ֆիզիկական վարժությունները ինչ միջոցներով են օժանդակում արյան շրջանառությանը:

1. Ֆիզիկական վարժությունները մեծացնում են կրծքավանդակի ներծծող դերը.— Շնչառության վարժությունների միջոցով մեծացնում ենք կրծքավանդակի ներծծող ուժը, որը լավացնում է վենային ներհոսումը դեպի սիրտը: Որովայնի մամուկի վարժությունները մի կողմից բարձրացնում են ներորովայնային ճնշումը, որն ազդելով որովայնի-

խոռոշի վենաների վրա, արյումը այնտեղից մղում է դեպի Ասրդը, ապա սիրտը, մյուս կողմից լավացնում է ստոծանդւ շարժումները, որն իր հերթին օդում է կրծքավանդակի ներծծող ֆունկցիային, որով պակասում են նաև Իրանգառման երևոյթները:

2. Կմախչի մկանների դեր.— Կմախչի մկանների ոիթմիկ կծկումները նպաստում են արյան շրջանառությանը, լավացնում են արտերային արյան հոսումը դեսի հյուավածքները և նպաստում են վենային արտահոսին՝ դեպի սիրտը:

3. Արյունատար անորների և մազանորների դեր.— Արյունատար անոթները պասսիվ խողովակներ չեն, նրանք ևս ակտիվ կծկումներով նպաստում են արյունը առաջ մղելուն: Ֆիզիկական վարժությունները լավացնում են անոթների տոնուաը, հետևապես և նրանց կծկողականությունը:

Մենք տեսանք, որ մկանային ակտիվ կծկումների ժամանակ բացված մազանոթների թիվը 100 անգամ ավելանում է, սրա համեմատ լավանում է հյուավածքային սնումը, որն այնքան անհրաժեշտ է սրտի հիվանդությունների ժամանակ:

4. Փոխանակուրյան ֆունկցիաների աշխուժացումը.— Սրտի հիվանդները մեծ մասամբ ճարսլակալում են, որովհետեւ մի կողմից հիվանդության պատճառով շարժումները խնայում են, մյուս կողմից՝ այս կամ այն շափով խանգարված են փոխանակության ֆունկցիաները:

Ֆիզիկական վարժությունները նպաստում են թթվեցման պրոցեսներին, աշխուժացնում են փոխանակության ֆունկցիաները:

Սիստեմատիկ կատարվող ֆիզիկական վարժությունների միջոցով մարդում ենք նաև սրտի մկանները, լավացնում ենք նրա սնումը, կծկողականությունը. սիրտը դառնում է ավելի աշխատումակ և տոկում: Ուրեմն, ֆիզիկական վարժությունների միջոցով մի կողմից ազդում ենք սրտի մկանների վրա, մյուս կողմից նպաստում ենք արյան շրջանառությանը մասնակցող բոլոր օրգանների ու սիստեմների:

Վրա և ամրացնելով կմախքային մկանները, բարձրացնում ենք հիվանդի աշխատումակությունը։ Հիվանդը ի վիճակի է դառնում մկանային աշխատանքներ կատարել ավելի էկոնոմ կերպով։

Ահա այն նախադրյալները, որոնք մեզ հիմք են տալիս սրտի հիվանդների նկատմամբ լայն շափով օգտագործել ֆիզիկական վարժությունները, որպես բուժման մեթոդ։

Բուժական ֆիզիկալտուրայի մեթոդիկան։— Բոլոր վարժությունները պետք է ենեն արյան շրջանառության կանոնավորման սկզբունքից։ Ծնչառության վարժությունների շնորհիվ մեծացնել կրծքավանդակի ներծծող դերը, ակտիվ շարժումներ ստորին վերջավորությունների համար և որովայնի մամուլի համար (պառկած վիճակում), շարժումներ ծայրանդամների մասը մկանային խմբերի համար։ Աստիճանաբար մեծացնել ընդհանուր ներգործող վարժությունների ազդեցությունը։

Երբ արյան շրջանառության խանգարումներ շկան, բուժական ֆիզիկալտուրայի խնդիրն է՝ պարապմունքները տանել մարդական սկզբունքով, բացատրել հիվանդի աշխատունակությունը, ստեղծել համագործակցություն՝ սրտանոթային սիստեմի և շնչառական օրգանների միջև։ Սիստեմատիկ մարզումներով ուժեղացնել մկանները։ Կանխել սրբան շրջանառության խանգարումները։

Սրտի հիվանդների համար բացի բուժական և հիգիենիկ մարմնամարզության դասեր տալուց, մեծ տեղ պետք է տալ քայլելով բուժելուն։

Չափավորված քայլելով լավացնում ենք արյան շրջանառությունը, ամրապնդում սրտի մկանները, լավացնում սրտի սնումը, կանոնավորում շնչառությունը, պակասեցնում կամ վիրացնում շնչարդելությունն ու սրտի խվոցը։ Քայլելով ամրապնդ ենք նաև իրանի և վերջավորությունների մկանները, նպաստում նյութերի փոխանակության աշխատացմանը, ակտիվացնում աղիքների գործունեությունը, լավացնում սննդանյութերի յուրացումը։

Քայլելով պակասեցնում ենք գեր մարդկանց քաշը, որից լավանում է ստոծանու աշխատանքը, հեղտանում շնչառությունը։ Զափավորված զբուանքները հանգստացնում են ներվերը, բարձրացնում են մարդու տրամադրությունը, լավացնում ինքնազգացողությունը, բարձրացնում աշխատումակությունը։

Քայլելով բուժելու ամենամեծ առավելությունն այն է, որ նրա շափավորումը հեշտ է, և յուրաքանչյուր հիվանդինքնուրույն կերպով կարող է հետեւել շափավորմանը։

Քայլելու շափավորումը կատարվում է հետեւյալ մեթոդով.  
ա) տարածության մեծացման միջոցով.

բ) քայլելու ընթացքում հանդսուի լնդմիջումների փոփոխման միջոցով.

գ) ճանապարհի թեքությունը ավելացնելու կամ պակասեցնելու միջոցով։

Այս այս երեք էլեմենտների փոխհարաբերությամբ կարելի է քայլելու ընդհանուր ֆիզիոլոգիական ծանրաբեռնվածությունը աստիճանաբար մեծացնել։

Սրտի հիվանդների համար շատ կարևոր նշանակություն ունի օլոլա շարժական ռեժիմի սահմանումը։

Բուժական ֆիզկուլտուրայի շատ պարագմունքներ, սրտի հիվանդների համար կարելի է կատարել տնային պայմաններում՝ բժշկի խորհրդով։ Մեթոդը մատշելի է և արդյունավետ։

Դիմեցնք բժիշկներին շարժական ռեժիմի խորհուրդներ ստանալու համար։

\* \* \*

Բուժական ֆիզկուլտուրան խորհուրդ է տրվում շատ այլ հիվանդությունների ժամանակ, որոնց մի առ մի թվեն այս բրոցյուրի սահմաններում հնարավոր չէ։

Պրակտիկ, առողջ մարդիկ պետք է պարագեն ֆիզկուլտուրայով և սպորտով։ Ում առաջությունը չի ներում ֆիզ-

կուլտուրայով կամ սպորտով պարագել, բժշկի խորհրդով  
իւրող է սպարազել բուժական ֆիզկուլտուրայով:

Հիշեցեք, որ առողջության համար այնշափ կարևոր ու  
հգոր ազդակ հանդիսացող ֆիզիկական վարժությունները  
սկսոք է օգտագործել ամենալայն չափով:

Ֆիզիկական վարժությունների կատարումը հիմանդրու-  
թյունների թե՛ բուժման և թե՛ կանխման համար, ամենուրեք  
և ամեն դեպքում հնարավոր է, և ստացած արդյունքները  
չափազանց մեծ են:



Պատ. խմբ.՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Տեխն. խմբ.՝ Հ. ԿԱՐԱԳԵՏՅԱՆ

Կանուգի սրբագրիչ՝ Հ. ԴԱՎԻԴՅԱՆ

ԳՖ 01880

Պատկեր 945

Տիրաժ 5000

Հանձնված է արտադրության 7/ХII—1949 թ.

Ստորագրված է տպագրության 23/I—1950 թ.

23/4 տպ. մամուլ:

Հայպոլիգրաֆհատի Հ 2 տպարան, Երևան Կոմիտանցի Հ 8, 1950 թ.

unprofitable. Many other good reasons had been mentioned  
for continuing the existing system, but none had  
been given which would satisfy the people of India.

Additional legislation had been proposed by the  
Government, but it had not been adopted. It was  
not possible to implement such legislation without  
the co-operation of the Indian Government.

Additional legislation had been proposed by the  
Government, but it had not been adopted. It was  
not possible to implement such legislation without  
the co-operation of the Indian Government.

Additional legislation had been proposed by the  
Government, but it had not been adopted. It was  
not possible to implement such legislation without  
the co-operation of the Indian Government.

Additional legislation had been proposed by the  
Government, but it had not been adopted. It was  
not possible to implement such legislation without  
the co-operation of the Indian Government.

Additional legislation had been proposed by the  
Government, but it had not been adopted. It was  
not possible to implement such legislation without  
the co-operation of the Indian Government.

Additional legislation had been proposed by the  
Government, but it had not been adopted. It was  
not possible to implement such legislation without  
the co-operation of the Indian Government.

Additional legislation had been proposed by the  
Government, but it had not been adopted. It was  
not possible to implement such legislation without  
the co-operation of the Indian Government.

Additional legislation had been proposed by the  
Government, but it had not been adopted. It was  
not possible to implement such legislation without  
the co-operation of the Indian Government.

Additional legislation had been proposed by the  
Government, but it had not been adopted. It was  
not possible to implement such legislation without  
the co-operation of the Indian Government.

Additional legislation had been proposed by the  
Government, but it had not been adopted. It was  
not possible to implement such legislation without  
the co-operation of the Indian Government.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0010096

Գինը 1 մուկը.

A "  
16594

16594